ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am

N 05-S «21» 03 2025 թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ-Ի

թիվ 05-S

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/19 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 2025թ. մարտի 20-ի զեկուցագրով «ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը.*

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ-ին (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար) ուղղված 2025 թվականի մարտի 20-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար 2025 թվականի փետրվարի 12-ին հայտարարված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ն, որի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված «Ապրանքի ամբողջական նկարագիր փաստաթղթում»՝ 6-րդ չափաբաժնի մասով՝ ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը հստակեցված չեն:

2025թ. մարտի 05-ին Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

2025թ.. մարտի 07-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ համակարգի միջոցով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, սակայն «ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված փաստաթղթերում կրկին առկա էր անամապատասխանություն՝ մասնավորապես, 6-րդ չափաբաժնի մասով, ապրանքի ֆիրմային անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող՝ ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ֆիրմային անվանումներից որևէ մեկին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների համաձայն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. <u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար Ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:
2. 2025թ. մարտի 05-ին Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները պահանջները:
3. 2025թ. մարտի 07-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ համակարգի միջոցով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, սակայն «ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում կրկին առկա էր անամապատասխանություն՝ մասնավորապես, 6-րդ չափաբաժնի մասով, ապրանքի ֆիրմային անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող՝ ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ֆիրմային անվանումներից որևէ մեկին:

3. <u>Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Պատվիրատուի ղեկավար՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ Բ. Սեդրակյանս, ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 2025 թվականի մարտի 20-ին ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝

«ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ի կողմից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

«ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:

Գնահատող հանձնաժողովը 2025թ. մարտի 05-ին նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել է **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ԱՔՍԵԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների շտկված փաստաթղթերում կրկին առկա էր անամապատասխանություն՝ մասնավորապես, 6-րդ չափաբաժնի մասով, ապրանքի ֆիրմային անվանումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող՝ ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ֆիրմային անվանումներից որևէ մեկին:

Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, **«ԱՔՍԵԼ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությո	որպես ընտրված մասնակից հրաժարվել	

			պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	ւնը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ԱՔՍԵԼ» ՍՊԸ	02918838	ք. Երևան, Թումանյան 8	X			21.03.2025թ. ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/19

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ **Բ. ՍԵԴՐԱԿՅԱՆ**